

Թիւ 26244
Փետրուար 9, 1979

Հոգեշնորհ

Տ. Աղիշէ ծ. Վրդ. Ախղիրեան
Հովիւ Ս. Պրկիչ Եկեղեցւոյ
Նախազա՞ն ծխական Խորհուրդի
Ռւսար.

Սիրելի Հայր Աղիշէ,

Սաացած ենք Փետրուար 7, 1979 թուակիր ժեր աեղեկազիրը, որով կը հա-
ղորդէք թէ ժեր նախազա՞նութեամբ Յունուար 28ին գումարուած համայնքիդ ծր-
խական ֆողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրու-
թիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը ինդրէք ընտրուած
անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի Նորընտիր անդամները,
ըստ սառըեւ արուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել օխական Խորհուրդի Նորընտիր Դի-
ւանի անդամոց անունները, հասցէնները եւ հետաձայնի թիւերը, ինչպէս նաև
ներփակեալ ելեւտական աեղեկազիրը՝ Յանձնախումբին կողմէ սառազրել առ-
է եաք:

Օրհնելով ծխական Խորհուրդի Նոր կազմը, կը մաղթենք ժեզի եւ ժեր պաշ-
տօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունեութեան սարի մը, ի պայծա-
ռութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ
ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ղազար Ղազարեան
Թորգոմ Պօյամեան
Հենէթ Գրիգորեան
Հըրպըրթ Ալեքսանտր
Հօլ Զէյթին